

## Նախրա ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ

### ՊԱՀԱՆՁՄՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԼՐԱՑՈՒՄ

Անգլերենի խորացված ուսուցման հաճարարքական դասընթացում ներկայում տեղի են ունենում նպատակների հիմնային փոփոխություններ: Դա բացատրվում է ոչ միայն մասնագիտական (պրոֆիլային) ուսուցման, այլև բազային մակարդակում աճագ-լերենի ուսուցման ծրագրերի արմատական փոփոխությամբ:

Ինչպես հայտնի է, օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի խորհրդային ավանդույթի շրջանակներում առանձնակի կարևորվում էին հիմնականում գործնական, մշակութային և կրթական նպատակները:<sup>1</sup> Սակայն արդեն 1990-ական թվականներին օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի առաջնային նպատակ է սկսում դատինալ հադրդակցական իրազեկության կամ կարողության ձևավորումը.<sup>2</sup> Արդի փուլում բազային մակարդակում օտար լեզվի դասավանդման նպատակները ներառում են օտարալեզու հարդրդակցական իրազեկության (խորային, լեզվական, սոցիալ-մշակութային, կոմպենսատորային և ուսումնաճանաչողական) խթանում և աշակերտների զարգացումն ու դաստիարակությունը օտար լեզվի միջոցներով:<sup>3</sup>

Մեթոդաբանները մեծ ուշադիրություն են դարձնում հատկապես օտար լեզվի միջոցով աշակերտների քննադատական մտածողության զարգացման, աշխարհայացքի, արժեքային համակարգի ձևավորման, ընդհանուր դաստիարակության և կրթության խնդիրների վրա: Անգլերենի խորացված ուսուցման դասընթացն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում օտար լեզուն սոցիալականացման, դաստիարակության ու կրթության միջոցի, և ոչ թե նպատակի, վերածելու համար: Բազային մակարդակում օտար լեզվի ուսուցումը հետապնդում է ոչ միայն կրթական, ուսումնական, այլև դաստիարակչական նպատակներ: Հաշվի առնելով այն, որ պրոֆիլային մակարդակում դասաժամների թիվը կարող է ավելանալ մինչև 210 ժամ, այն դեպքում, եթե բազային մակարդակում այն 105 ժամ է, կարելի է պնդել, որ օտար լեզվի ուսուցման նպատակներն այսուղե ենթարկվում են թե՛ բովանդակային, թե՛ ծավալային փոփոխության: Դա այն է, որ անգլերենի խորացված ուսուցման դասընթացն ընտրած աշակերտան ավելի նպատակալաց է, ավելի հետևողական է իր կայացրած որոշումներում, և հաղորդակցական ունակության ձևավորումը՝ որպես ինքնազարգացման, ինքնակրթության միջոց, ավելի շատ է կարևորվում:

Ինչպես հայտնի է, աշակերտների պահանջմունքների վերլուծությունը պրոֆիլային և պրոֆիլային-կողմնորոշման ուսուցման հիմնական պահանջմունքից է: Հայտնի է նաև, որ մեթոդաբանները օտար լեզվի ուսուցման դասընթացը նախագծելիս հիմնականում ուշադիրություն են դարձնում լեզվանյութի վերլուծության և համակարգման, ուսուցման արդյունքների պլանավորման վրա:<sup>4</sup>

Սակայն անգլերենի խորացված ուսուցման դասընթացը կազմակերպելիս առաջին պլան է մղվում պահանջմունքների վերլուծությունը, քանի որ միայն այդպես է հնարավոր անհատակացնել դասընթացը, դիտարկել այն ինչպես տարբերակված, այնպես էլ համալիր: Այսուղե մենք մոտենում ենք աշակերտների պահանջմունքների ինդիքին դրդապատճառի առաջացման տեսանկյունից, որի վրա, ըստ Օ. Պոլյակովի,

<sup>1</sup> Г. Р о в а, *Методика обучения английскому языку. (На англ. Яз.) Учебное пособие для пед. ин-тов и фак. иностранных языков Л., 1975, стр. 312, 34-39.*

<sup>2</sup> *Stū Objectives for foreign language learning by Jan A. Van EK Volume 1: Scope, Project # 12.*

“Learning & teaching modern languages for communication”: Council for Cultural Cooperation, Council of Europe Press, 1993, p. 11-14.

<sup>3</sup> П. С ո ւ ե ս, *Обучение иностранному языку на старшей ступени общего среднего (полного) образования. Профильный уровень (Х-ХII классы), “Иностранные языки в школе”, № 2, 2006, стр. 7.*

<sup>4</sup> И. Б ո ւ մ, *К проблеме планируемого результата обучения иностранным языкам в общеобразовательной средней школе, “Иностранные языки в школе”, № 6, 1984, стр. 17-24.*

ազդում են երեք տեսակի գործոններ՝ ա) ուսուցման կազմակերպման և անցկացման վրա ազդող գործոններ, բ) ուղղակիորեն աշակերտի հետ կապված անհատական գործոններ, 3) սոցիալ-մշակութային գործոններ։<sup>5</sup> Նրդապատճառի առաջին տեսակի գործոնների առումով ուսուցման արդի փուլում ի հայտ են եկել բազում խնդիրներ: Այսպէս, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ընտառատանի Դաշնությունում ստեղծվել են մի շարք ՍՊՆՀ-եր (մեթոդառումնական համալիրներ): Մինչին, Հայաստանի Հանրապետությունում հիմնականում շրջանառության մեջ են կա՞մ Ո-Դ-ում ստեղծված վերոհիշյալ գրքահամալիրները, կա՞մ արտասահմանյան երկրներում հայտնի գրքաշարերը:<sup>6</sup> Իսկ դա նշանակում է, որ ՀՀ-ում դեռևս չկան պրոֆիլային ուսուցման դասընթացին համապատասխանող սեփական դասագրքեր, ել չենք ասում՝ դասագրքաշարեր: Բազային դասընթացի համար նախատեսված դասագրքերը կարող են օգտագործվել կոնկրետ պայմաններում ընտրողական, ֆակուլտատիվ դասընթացներում: Սակայն թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները մեծ դժվարությունների են հանդիպում, երբ ուսուցման գործընթացում կիրառվում են ոչ թե դասագրքեր, այլ նրանցից ընտրովի վերցված տեքստեր և վարժություններ: Բանն այն է, որ շրջանառության մեջ է մնում Բոնկը,<sup>7</sup> ընդուրում, ոչ թե սրա վերահրատարակված վերջին տարբերակները, այլև այն, ինչ կրկնությունների հիմնական դասագիրք է հանրավել տարիներ շարունակ: Ներկայումս այս դասագիրքն են գործածում ՀՀ-ի շատ դպրոցներ խորացված ուսուցման դասընթացի վերջին փուլում 9-10-րդ դասարաններում:

Անհատական գործոնների դիտարկումը նույնական է հայտ է թերում հետաքրքրացարժ փաստեր: Մասնավորապես այն, որ տվյալ դասընթացի մեջ ընդգրկված աշակերտների մեծ մասը լավ չեն պատկերացնում իրենց նպատակները: Ավելին, ուսուցման ոչ մի փուլում չի կատարվում նրանց պահանջմունքների վերլուծություն: Ո՛չ ուսուցիչները, ոչ մերորաքանները չեն փորձում գիտափորձով ցույց տալ այս կամ այն մերորական համալիրի, գրքի, աշխատանքային տեսրի, այս կամ այն մերոդի, սկզբունքի արդյունավետությունը:

Հայկական լսարանի համար չնախատեսված դասագրքերում հաշվի չեն առնված հայերենի և անզերենի քերականական, հնչյունական, ուղղագրական, տիպարանական առանձնահատկությունները, քերականական, բառային, հնչյունական, գործարանական փոխներքափառացման դրսուրումները:

Դիտարկելով պրոֆիլային ուսուցման գործընթացում աշակերտների դրդապատճառների տարարաժանման Ո. Գարդերի և Վ. Լամբերտի բանաձևը, ըստ որի՝ դրանք լինում են գործիքային (“instrumental”) և ներառական (“integrational”)՝ կարող ենք ասել, որ խորացված ուսուցման դասընթացում ներգրավված սովորողների դրդապատճառները հիմնականում գործիքային են: «Գործիքային մոտիվացիան այն է, երբ լեզուն ուսումնասիրում են որպես գործիքային նպատակների հասնելու միջոց, օրինակ՝ կարդալու մասնագիտական գրականություն, լեզվից կամ լեզվով քննություն հանձնելու, առաջխաղացում ունենալու ծառայության մեջ».<sup>8</sup> Իսկ ներառական դրդապատճառները դրսուրում են այն ժամանակ, երբ լեզուն սովորողի մոտ ցանկություն է առաջանալ ներառվել լեզուն կրողների նշակույթի մեջ, նույնացնել իրեն նրանց հետ և դառնալ նրանց հանրության մի մասը:

Թե՛ պրոֆիլային, թե՛ մասնագիտական կողմնորոշման անզերենի ուսուցման առաջնահերթությունը աշակերտների կողմից իրենց պահանջմունքների գիտակցումն է: Խնդիրն այն է, թե նրանք ինչ ձևերով և միջոցներով են սկսում գիտակցել իրենց պահանջմունքները:

<sup>5</sup> О. П о л я к о в, *Автономия учащихся как основа развития современного непрерывного образования личности*, “Иностранные языки в школе”, № 3, 2004, стр. 46.

<sup>6</sup> *Star First Certificate Star Student's Book: Luke Prodromou, Macmillan publishers Limited, 1998, 240 p.; Nexus English for advanced learners. Martin Mills, 1990, 182 p.*

<sup>7</sup> Н. Б о н к, Г. К о т ո ւ ն, Н. Л ո ւ կ յ ա ն օ ւ ա, *Учебник английского языка, Часть 1, М, 1998, стр. 637.*

<sup>8</sup> W. L a m b e r t, *Language, Psychology, and Culture*. Stanford, CA:Stanford University Press, 1972.

1978թ. Զ. Մանդիկի “Communicative Syllabus Design”-ը<sup>9</sup> բացեց նոր դարաշրջան մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման տեսության և պրակտիկայի մեջ: Զ. Մանդիկն համառոտ ներկայացրել է լեզվի ուսուցման կիրառման բնական պայմաններում պահանջնունքների բացահայտման ընթացակարգը, առաջարկել մի շարք հարցեր, որոնց պատասխանների վերլուծությունը կարող է տալ արժեքավոր տեղեկություն անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացը նախագծելու համար:

Անգլերենի խորացված ուսուցման դասընթացը մի կողմից ներկայանում է որպես պրոֆիլային, մյուս կողմից՝ մասնագիտական կողմնորոշման դասընթաց:

#### Դարպոց

#### Ինստիտուտ

Պրոֆիլային ուսուցում → մասնագիտական ուսուցում  
Պրոֆիլային ուսուցում → մասնագիտական կողմնորոշման ուսուցում

Այսինքն՝ անգլերենի խորացված ուսուցման դասընթացն ավարտելուց հետո աշակերտն ընդունվում է անգլերենի մասնագիտական ուսուցման ֆակուլտետ (անգլերեն լեզու, քարգմանական գործ և այլն) կամ ընդունվում է մասնագիտական կողմնորոշման ուսուցման ֆակուլտետ (տնտեսագիտական, իրավաբանական և այլն): Պահանջնունքների վերլուծությունն օգնում է ճիշտ կողմնորոշվել ոչ միայն աշակերտներին, այլև ընտրել համապատասխան մասնագիտական գրականություն, մեթոդներ, սկզբունքներ: Այդ վերլուծությունն օգնում է նաև հստակ պատկերացում կազմելու, թե ում ընդգրկել ընտրողական և ֆակուլտատիվ դասընթացներում: Սակայն ասվածը չի նշանակում, որ նշված վերլուծությունը պրոֆիլային ուսուցման հաջող կազմակերպման հիմնական պայմանն է:

Ճիշտ է նկատում նաև Օ. Պոլյակովը, որ պահանջնունքների վերլուծությամբ կարելի է որոշել, թե ինչ սովորեցնել և ոչ թե՝ ինչպես:<sup>10</sup> Դա է պատճառը, որ մերոդարձներն այսօր առանձնացնում են պահանջնունքների տարրեր տեսակները: Նոյն Յ. Մանդիկն դիտարկել է իրական հաղորդակցման իրադրություններում առկա պահանջնունքները:<sup>11</sup> Ն. Չամբերսը քննության առարկա է դարձել հաղորդակցական պահանջնունքները և նրանց իրացման առանձնահատկությունները:<sup>12</sup> Ու. Օրպահիք հարցին նոտենում է սովորողների անձի ձևավորման անհատականացման տեսանկյունից՝ տարարածանելով օրինակությունը և սուբյեկտությունը պահանջնունքները և առանձնացնելով ուսուցման մարտավարություններն ու ոճերը, տեղական մշակույթի ուսուցման միջոցներն ու եղանակները, պահանջնունքների վերլուծության շրջանակները:<sup>13</sup>

Օ. Պոլյակովը, ընդհանրացնելով արևմտյան մեթոդական մշակույթում պահանջնունքների վերլուծության վերաբերյալ գորություն ունեցող հարուստ փորձը, առանձնացնում է դրանց երկու խումբ՝ 1. հաղորդակցական պահանջնունքները, թերացումները և ցանկությունները, 2. ուսումնական պահանջնունքները: Ըստ նրա՝ «Հաղորդակցական պահանջնունքները որոշվում են այնպիսի իրադրությունների բացահայտման միջոցով, որոնցում սովորող պիտի գործի, օգտագործելով անգլերենը և նրա բադադրամասերի համապատասխան վերլուծությունը»: Օրինակ՝ գործարարը կարող է ունենալ գործնական նամակները հավանալու, համաժողովներում արտասահմանցի գործնկերների հետ արդյունավետ հաղորդակցվելու, զանազան գործարքներ կնքելու, առևտրային կատալոգներից տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև, այդ իրադրություններին բնորոշ լեզվական (խորային, գործառական, կառուցվածքային, բառային) առանձնահատկություններն իմանալու պահանջնունք:

Ակնհայտ է, որ անգլերենի դասընթացում թե՛ պրոֆիլային, թե՛ մասնագիտական կողմնորոշման հաղորդակցական պահանջնունքների վերլուծությունը նրա հաջող և արդյունավետ անցկացման կարևորագույն պայմանն է: Այն պիտի հաշվի առնեն ոչ միայն գործնական դասընթաց անցկացնող ուսուցիչները, այլև այն նախագծող, դասագրքաստեղծող, պահանակորդ մեթոդաբան-մանկավարժները: Թերությունների, թե-

<sup>9</sup> J. Munday, *Communicative Syllabus Design*. Cambridge University Press, 1978.

<sup>10</sup> Օ. Պօլյակօն, Աշվ. աշխ., էջ 49:

<sup>11</sup> J. Munday, Աշվ. աշխ.:

<sup>12</sup> F. Chambers, *Reevaluation of needs analysis in ESP// ESP Journal*. 1980. Vol. 1/1. p. 27-31.

<sup>13</sup> R. Allwright, Perceiving and pursuing learner's needs//Individualization/ Ed. By M. Geddes. G. Sturridge. London: Modern English Publications, 1982, p. 24-28.

բացումերի վերլուծությունը նույնպես նույն նպատակն է հետապնդում: Տվյալ դասընթացը պլանավորող, նախագծող մասնակինները պիտի հստակորեն պատկերացնեն, թե որն է ուսուցման ընթացքում ձախողումների պատճառը:

Պահանջմունքների վերլուծությունն օգնում է նաև հաղթահարելու տարրեր իրադրություններում առաջացող դժվարությունները, այսինքն՝ այն օգնում է ճշշտ պատկերացում կազմել սովորողների իրադրային ուղղվածություն ունեցող ցանկությունների մասին: Լեզվանյութի, դասանյութի, համապատասխան մեթոդի և սկզբունքի ընտրությունը հնարավորինս չպիտի հակասի սովորողների իրադրային, իրավիճակային ցանկություններին:

Հաշվի առնելով դասանյութը և լեզվանյութը, ուսուցման մեթոդներ ու սկզբունքները ընտրելիս սովորողների ցանկությունները՝ ուսուցիչները և դասընթացը նախագծողները ավելի մեծ հնարավորություն են առանում մոտեցնել ուսումնական իրադրությունները բնականին, սուելծել ոչ թե արհեստաձին, այլ բնական իրադրություն: Լուրջ խնդիր է նաև պահանջմունքների վերլուծության անցկացման կարգի, ժամանակահատվածի և ընթացակարգի ընտրությունը: Մերողարանները առաջարկում են անցկացնել այն ամբողջ ուսուցման ընթացքում, նրա տարրեր փուլերում: Այդպիսի մոտեցումը հնարավորություն է ընձեռում ճիշտ գնահատել թե՛ դասընթացը նախագծողների, դասազիրը ստեղծողների, թե՛ գործնական աշխատանք իրականացնող ուսուցիչների աշխատանքը: Սյստեղ կարևոր է հստակորեն ընդգծել, թե անզերենի մասնագիտական դասընթացը նախագծելիս որ հայեցակետն է առաջնային դիտվում.

1. Կողմնորոշված ենք դեպի մասնագիտական լեզուն,
2. Կողմնորոշված ենք դեպի հմտությունները,
3. Կողմնորոշված ենք դեպի ուսուցումը:<sup>14</sup>

Կասկած չկա, որ մասնագիտական կողմնորոշման, հմտությունների զարգացման և ընդհանրապես ուսումնառության կաղապարները իրար չեն հակասում, այլ լրացնում են մեկը մյուսին:

Ըստ ESR դասընթացի հայտնի նախագծողներից մեկի՝ Թ. Հաշինսոնի՝ դեպի մասնագիտական լեզուն կողմնորոշված դասընթացի դեպքում դասընթացի նախագծումը սահմանափակվում է լեզվի օգտագործման իրական իրադրություններում խոսքային գործունեության իրականացման մասին գիտելիքով: Հնտություն զարգացնող դասընթացի համար առաջնային են խոսքագործունեության, խոսքի սերման գործընթացները, իսկ դեպի ուսումնառությունը կողմնորոշված դասընթացը դիտարկվում է նախագծման գործընթացի բոլոր փուլերում:<sup>15</sup>

Ինչպես ցոյց են տալիս մեր անցկացրած հարցախույզի արդյունքներն անզերենի խորացված ուսուցման (9-10-րդ) դասարաններում, աշակերտները շատ լուրջ են վերաբերվում իրենց ապագա մասնագիտությանը: Մեր հարցախույզի հիմնական նպատակն աշակերտների պահանջմունքների բովանդակությունն ու ողղվածությունը որոշեն եր: Առաջարկվել են հետևյալ հարցերը.

### *1. Ինչո՞ւ ընտրել անզերենի խորացված ուսուցման դասընթացը*

- ա) սիրում եմ անզերենը
- բ) ուզում եմ դասնալ անզերենի ուսուցիչ
- գ) ուզում եմ օգտվել այդ լեզվով գրականությունից
- դ) առանց անզերենի չես հասնի հաջողության ոչ մի մասնագիտական ոլորտում
- ե) ուզում եմ դասնալ դիվանագետ

### *2. Ըստ Ձեզ՝ անզերենի խորացված ուսուցումը նպաստում է*

- ա) ճիշտ և ճշգրիտ պատկերացումներ ունենալ Անզիայի, ԱՄՆ-ի, այլ անզիախոս երկրների մասին
- բ) լինել համակողմանի զարգացած, ժամանակակից մարդ
- գ) յուրացնել անզիախոս երկրների պատմությունն ու մշակույթը

<sup>14</sup> О. П о л я к о в, նշվ. աշխ., էջ 50:

<sup>15</sup> T. H u t c h i n s o n, A. W a t e r s, English for Specific Purposes: A Learning-centred approach. Cambridge: Cambridge University Press, 1987, p. 72-74.

դ) ցանկացած պահի հեռանալ Հայաստանից

Ե) աշխատանք զունել ցանկացած զարգացած երկրում:

3. Ո՞վ է Ձեզ խորհուրդ տվել, որ սովորեք անզերնների խորացված ուսուցման դասընթացով.

ա) ծնողներս

բ) դպրոցը մոտ է տանը

գ) ինքս եմ որոշել

դ) բարեկամներս

ե) ուսուցիչներս

Աշակերտների պատասխանների արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ նրանց մեծ մասը՝ 65%-ը, օտար լեզու սովորում են ծնողների կամ բարեկամների խորհրդով: Դրա հետև մեկտեղ՝ աշակերտների զգալի մասը կարևորում է օտար լեզվի դերը նաև ապագա մասնագիտության ընտրության հարցում: Ընդ որում, հարցման ենթակաված 45 աշակերտներից 27 համոզված էր, որ անզերննը վճռորոշ է լինելու ապագա մասնագիտական գործունեության մեջ: Նրանք վստահ էին, որ դառնալու են անձներնի ուսուցիչ, դասախոս, բարգմանիչ, զիդ կամ դիվանագետ: Միայն 6%-ը չէր կանորել անզերննի դերը ապագա մասնագիտության ընտրության հարցում:

Այսպիսով, մասնագիտական խորացված անզերննի ուսուցման դասընթացը կազմակերպելու համար ուսուցման բոլոր փուլերում անհրաժեշտ է իրականացնել սովորողների պահանջնությունների վերլուծություն: Վերջինս անզերննի խորացված ուսուցման դասընթացը կազմակերպելիս մղվում է առաջին պլան, քանի որ առանց դրա հնարավոր չէ անհատակացնել ոչ մի դասընթաց, դիտարկել այն տարրերակաված կամ ամբողջապես: Այն օգնում է ուսումնամեթոդական գրականություն, թեմաներ ու տեքստեր, համապատասխան մեթոդներ և սկզբունքներ ընտրելիս և կիրառելիս: Պահանջնությունների վերլուծության հիմնական պահանջներից է ուսումնամեթոդական գրականության մշտական վերանայումը, տարրերակաված և անհատականացված մոտեցումների կիրառումը: Սա պիտի հաշվի առնեն ոչ միայն գործնական դասընթաց անցկացնող ուսուցիչները, այլև այն նախագծող, դասագրքաստեղծ և պլանավորող մեթոդաբան-մանկավարժները:

## АНАЛИЗ ПОТРЕБНОСТЕЙ ПРИ УГЛУБЛЕННОМ ИЗУЧЕНИИ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Резюме

Н. Айрапетян

В данной статье рассмотрены особенности анализа потребностей в профильно-ориентированном обучении английскому языку. Показано, что анализ потребностей имеет большое значение не только в профильно-ориентированном, но и в профильном обучении. Особенно подчеркивается роль и значение анализа потребностей и при отборе школьников, и в процессе обучения английскому языку в школах с углубленным изучением иностранного языка. Соответствующая обработка и учет данных проведенного анализа помогает при отборе учебно-методических комплектов, учебной литературы, методов и принципов преподавания, при организации учебно-методической работы в школах с углубленным изучением английского языка.